Դանիել Վարուժան
(1884 - 1915)

Բանաստեղծություններ
Առկայծ ճրագ
Անդաստան
Գեղեցկութեան արցանին
Հորս բանտի մեջ
Ձոն
Մայիս մէկ
Նաւասարդեան
Երեք քոյրեր
Հայր, օրհնե՛
Հաշիշ
Բանուորուհին
Կարմիր հողը
Կակաչներ

Առկայծ ճրագ

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Հաղթանակի գիշերն է այս տօնական. -
Հա՛րս, եղ լեցո՛ւր ճրագին։
Պիտի դառնայ կռիւէն տղաս յաղթական. -
Հա՛րս, քիթը ա՛ռ պատրոյգին.

Սայլ մը կեցաւ դրան առջեւ, հորին քով. -
Հա՛րս, վառէ՛ լոյսը ճրագին։
Տղաս կու գայ ճակատն հպարտ դափնիով. -
Հա՛րս, բեր ճրագը շեմին։

Բայց. . . սայլին վրայ արի՞ւն եւ սո՞ւգ բեռցեր են. . .
Հա՛րս, ճրագը ասդի՛ն երկարէ։
Հերոս տղաս հոն զարնուա՛ծ է սրտէն. -
Ա՛խ, հա՛րս, ճրագըդ մարէ՛. . .
Անդաստան

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությու՛ն թող ըլլա. . .
Ոչ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին
Ու երբ հընչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությու՛ն թող ըլլա։

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությու՛ն թող ըլլա. . .
Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղի՛կ թող ըլլա։

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատությու՛ն թող ըլլա. . .
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդի.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝
Բերկրությու՛ն թող ըլլա։

Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերություն թող ըլլա. . .
Ծաղկի՝ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությու՛ն թող ըլլա։
Գեղեցկութեան արցանին

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Կ՝ուզեմ ըլլայ քու մարմարիո՛նդ պեղուած
Ոլիմպոսի ամենէն խոր արգանդէն.
Եւ իմ մուրճիս տակ ըզգենու հրեղէն
Միս մը կնոչ, լոյսով, տենդով սրարբած։

Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի՝
Հավերժին մէջ անմահացած ըզգայ զինք.
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ըստինք
Դաշնակութիւն մ՝ուր կենսահիւթը հուզի։

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ՝հոգվոյն պէս,
Եվ հեթանոս այդ մերկութեանդ ներքև
Տառապի՛ մարդն, ու չկրնայ դպչիլ քեզ։

Թէ հարկ ըլլայ զոհ մը ընել քեզ պարգև,
Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթուիլ՝
Որպէսզի կուճդ ըմպէ արեանս հուսկ կաթիլ։
Հորս բանտի մեջ

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Դեռ փոքր էի. եկա քեզի մի նավոր,
Մութ զըդանիթ մեր այցի։
Մայրս հիվանդ էր. կը շըրջեի ես ազատ
Մեշտեղ բանտի և մահճի։

Լուր տըվին քեզ . եկար առջևը դըրան
Վանկապատ՝ որ - ոճիր-
Կը բաժներ մեր ողջագուրումը կըղկաթ։
Երկար անխոս, վըշտակիր :

Որքան նիհար էի և որքան աչքերդ
Ծարավ էի արևու.
Մորուքիդ տակ կարծես ոսկրի վրա բուսած.
Ով հայր, մեռել մէիր դու։

Նըշմարելուտ պես զիզ ժըպտիլ ըսկըսար.
Բայց այդ ժըպիտը բարի,
Այդ սուտ ժըպիտն էր նունուֆար մը ծաղկած
Լըճի մը վրա արտոսրի:

Կարկոեցիր սև վանդակին ետևե
Շըրթունքներդ իմ շըրթներուն.
Բայց իրարու անոնք ավաղ չըհասած՝
Մեր համբույրին դողդոջուն՝

Նույն ժամանակ եղան օրրան և դագաղ:
Ոհ, պիտի որչապ քեզի
Բաղձաի տալ ընգրկումին մը մեջ տաք՝
Ազատ աշխարհը դուրսի,

Եվ մի փոքրիկ բիբերս քու բիբերուտ
Տեղալ երկնքին անսահման,
Սըրտես սըրտիդ պարապել բոլոր օրերս այն,
Որ արևու տակ անցնեմ:

Մութ բանտիդ մեջ գարնան վարդերը ամբողջ
Պիտի լեցնել ուզեի,
Կամ ճիղմ հասակս ու ապագան հասագիս
Պիտ՝ հոն թաղել ուզեի:

Ով տըխուր ժամ: Քեզ մի առ մի պատմեցի
Սև վիպակները մեր տան,
Հաննիս մահն ու հիվանդ մորս հազը խուլ
Լըռության մեջ գիշերվա.

Ըսի թե մեր տանիքի վրա, լուսնի տակ,
Բուերը պար կը բըռնեն,
Թե այս տարի մեր վարդենին չորացավ
Գերեզմանատան խորշակեն:

Կը լըսեիր զիզ եվ հարցում կըընեիր,
Երբ հըրաման մը վայրի,
Կույր հըրաման մըեկավ ըզմեզ բաժնելու...
Դարձար առանց համբույրի...

ՈՒ ես երկար ետևեդ պիշ նայելով,
Հայր իմ, մինակ, հոն լացի.
Մինչ կուրծքիս տակ բաշ կը թոթվեր ոխ մը նոր

Սիրտս աչքերես քամեցի:

. . . Ով կյանք սիրո, լանջ քըտինքի, սիրտ փուշի
Ցեխի նետված սըրբություն,
Արևուն բորբ հոսանքներու դեմ գոցված,
Ով երակներ ազազուն[1]:

Տեսա՝ որ ձեզ հետ, ձեզի հետ սուզեցան
Եղեռնի մեջ, արտալած,
Սուրբերն ամե՛ն կրոնքի, ամե՛ն շուշաններ
Եվ Հիսուսներ թրքնըված:
Ձոն

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Եղեգնյա գըրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք —
Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...
— Քեզի ընծա՛, հին հայրենիք —
Եղեգնյա գըրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լու՛յս ելաներ:

Եղեգնյա գըրչով երգեցի կարոտ.
— Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ —
Ան տարաշխարհիկ բույսի մ՚՚էր ծըղոտ...
— Ձեզի ընծա՛, հեգ պանդուխտներ —
Եղեգնյա գըրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ:

Եղեգնյա գըրչով երգեցի արյուն.
— Ձեզի ընծա՛, սուրի զոհեր —
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կընյուն...
— Ձեզի ընծա՛, կրակի զոհեր —
Եղեգնյա գըրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:

Եղեգնյա գըրչով որբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՛, հայր ալեհեր –
Ցամաքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՛, մայր կարևեր -
Եղեգնյա գըրչով օճախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծու՛խ ելաներ:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
- Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ -
Գրիչս եղավ անթրոց սըրտերու հնոցի...
- Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ -
Եղեգնյա գըրչով վըրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:
Մայիս մէկ

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Քընարս այսօր, կըտըրտելով լարերն իր,
Ձե՛զ կը կանչէ Արևելքէն Արևմուտք,
Ո՛վ դուք
Հացի՛ զոհեր, որ ունիք միշտ արևու
Պասուք:

Այս առաւօտ՝ գըտա հասակըս թաղուած
Հեղեղին մէջ շուրջըս ծաղկած վարդերուն.
Եւ կանգուն՝
Խմեցի ավիշն հողին, երգերը բոլոր
Բույներուն:

Ինձի՛ եկէք, ես կախարդն եմ Մայիսին. --
Ձեր քըրտինքը ես կ’ընեմ գոհար ցօղն անգին
Վարդին.
Կը հեղում ձեր ոսկորներուն մէջ ցամքած՝
Արփին:

Ինձի՛ եկէք գործատունէն՝ ուր երկար
Շաղուեցիք դուք մեր Աշխարհին ցեցակեր
Նո՛ր հիմեր.
Փուռէն՝ որ ձեր գըլխուն, սըրտին վրայ՝ մոխիր

Է ցաներ։

Ինձի՛ եկէք նաւարանէն՝ ուր կռեցիք
Նաւեր, վաղուան ձեր դագաղները պողպատ։
Ելէ՛ք արդ
Աղիքներէն հողին, ճահճին արգանդէն,
Դա՜շտն ու ա՜րտ։

Ինձի՛, ինձի՛ եկէք այս օր բոլորնիդ.
Սիրտս ա՜յնքան բոց ունի, հոգիս՝ ա՜յնքան լոյս՝
Որ ձեր խիւս
Ցեխերէն իսկ կը շաղուեմ նո՛ր Մարդկութիւն
Եւ նո՛ր Յոյս։

Հերի՛ք հիւծաք նըկուղներուն մէջ խոնաւ,
Եւ ունեցաք միշտ կարոտ, նման խըլուրդի,
Օդի,
Եւ ժանգի պէս երկաթներուն փարեցաք,
Նօթի՜։

Թող ձեր մուրճն ա՛լ չըկայծակէ սալին վրայ.
Մըխուած մընան թող ատամները սղոցին՝
Հեցին.
Կոճղին խըրուած՝ թող խէժերէն ժանգոտի
Կացինն։

Ի՛նչ փոյթ թէ որբ մընայ շարժիչ մեքենան,
Եւ գործատան մէջ ճիւաղներ սողան լուռ.
Ի՛նչ փոյթ ո՛ւր
Դառնայ ճախրակն, ու խորտակուին լոյծ փոկերն
Ընդհանուր։

Դե՛հ քրրտնաբոյր ձեր շապիկներն հանեցէք.
Թող ճենճոտած ձեր գըտակները նետուին
Հնոցին.
Գլուխնիդ այսօր պիտի սուզիմ արևուն
Բոցին։

Ինձի՛ եկէք, եկէք ինձի՛, Եղբայրնե՛ր,
Ձեր ամենուդ այսօր տօնն է Մայիսի,
Վասըն զի
Հողն ըստեղծիչ, ձեր ըստեղծիչ արեան լոկ
Կը խօսի։

Զեփիւռն ահա,՛-- ո՛վ տառապեալ հոգիներ,
Ձեր կուրծքերուն բացէ՛ք վէրքերն՝ իր անգին
Խունկին.
Աղբիւրն ահա՛, թո՛ղ զըլուխնիդ իր լոյսին
Հակին։

Դեղձին ահա՛, ծաղիկներն իր կ’անձրևէ
Ձեր կոշկոճուած ձեռքերուն վրա արիւնոտ.
Եւ կարօտ
Կը զգայ մայրին՝ որ գըրկէք զինք թևերով՝
Վիրոտ։

Ահա Արե՛ւն, Արե՛ւն ահա. լոկ ձեզի՛
Այս օր կ’նայի. կը համբուրէ միայն ձե՛ր
Ճակատներ.
Ան՝ բոլոր միւս ճակատներուն վրայ իշխող
Է թըքեր։

Ձե՛րն են դաշտեր, ձե՛րն է Քաղաքն, որուն լուռ
Փողոցներէն պէտք է անցնի լոկ այս օր
Ձե՛ր թափօր,
Դրօշներ ծըփան, ծաղկին յոյսեր, և գոռայ
Շեփոր։

Հանգի՛ստ երգեն թող ձեզ բոլոր արծիւներ.
Հանգի՛ստ երգէ քընարս, որուն, ձեզ համար,
Իբրեւ լար,
Ես արծիւի տըւի այս օր աղիքներ՝
Որ գոռար։

Թող ձեր շեմերը ողողուին վարդերով։
Երբ գայ լուսինն ու իր բիբերը բոցէ
Յաձէ՝
Բալասանո՛վ թող այս գիշեր ձեր դուռներն
Օծէ...
Նաւասարդեան

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Հանձա՛րդ Հայկեան, Նաւասարդեան սա տօներուն

Արեւափառ՛
Ա՛լ վերածնէ փլատակներէն, և փառակոչ
Քնարըդ ա՛ռ։

Յանու՛ն Ուժին, յանու՛ն Ցեղին, մտիր մեհեանն
Աստուածներուն.
Ջահը ձեռքիդ՝ բազնէ բագին համասրփռէ՛
Հուր ու արիւն։

Եվ բարցրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակնըդ նուռ,
Յետոյ զոհուող քերթողներուն սրրտին վրայ
Լեցու՛ր, լեցու՛ր։

Զի մենք, յանուն Սէրին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարէն կոյս,
Մե՛նք, Զաւակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալոյս։
Երեք քոյրեր

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Անոնք երեք քոյրեր էին
Նըման երեք Շընորհներուն.
Երեքն երեք ուխտեր ըրին
Առչնն երեք բագիններուն։

Երեցն ըսավ.- «Դի՛ք կայծակի,
Քե՛զ կը ձոնեմ մազերս ոսկի։»-

Միչնեկն ըսավ.- «Ըզգա՛ստ Հիմեն,
Քե՛զ կը՝ընծայեմ մատնիս հրեղեն։»-

Կըրտսերն ըսավ.- «Վավա՛շ Աստղիկ,
Ա՛ռ իմ կոյսի գոտիս ծաղիկ։»-

Ո՛վ որ մազերն ձոնեց Զեսի՝
Յոթը ազգի յոթ խույր կապեց
Գահին վըրա Արտաշեսի։

Ո՛վ որ մատնին տվավ Հիմենին՝
Յոթը չրքնաղ հերոս ծընավ
Գերահրզոր Հայաստանին։

Ո՛վ կույս գոտին մեչքեն ձրգեց՝
Ան՝ տառապյալ քույրը եղավ,
Եվ շուկային մեչ նուռ ծախեց։
Հայր, օրհնե՛

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Հայր իմ, օրհնե՛. ժամը հասավ. պիտի երթամ.
Նոր կյա՛նք մ՝ինծի կը սպասե
Պատմությունն ես թողուցի. նոր արյուն
Երակիս մեջ կը վազե։

Հառա՛ջ,հառա՛ջ. - գըլուխս ետ չե՛մ դարձըներ.
Երկընքես վա՛ր թող իյնան
Անվիշտ կյանքիս ամեն աստղեր.հոգըս չէ՛.
Անցյալս իջնա թող դամբան։

Օհ, ինծի՛ ինչ թե կը փետեմ վարդին թերթ,
Եվ փուշին կյանք կու տամ միշտ,
Թե գրկաբաց հորձանքին մե՛ջ կը նետվին.
Խինդս է՝ ձանձրույթ, սերս է՝ վիշտ։

Ամեն խայտանք ջախջախեցին սըրտիս մեջ.
Չեմ վախենար սև ծրծեծել.
Վանք մըտնող կույս մեմ՝ որ խըզված իր վարսեր՝
Անխիղճ անհոգ, կը դիտե՛...

Հա՛յր, ես կերթամ այն ճամբայեն՝ որ ճերմակ
Մազերուդ զիզ կտանին,
Վաստակաբեր ոսկըրներուդ, ծեր սըրտիդ
Եվ սերուդ կենդանի.

Բավական է.- աշխատեցար, կըրեցիր,
Ամեն նետի հարվածի

Վահան եղար ինձի համար. հոգիտ է՝
Որ հոգվույս մեջ կը հածի։

Իմ արյունս է գողացած քու քըրտինքեդ.
Հոգնությանդ ծիլն եմ տըխուր։
Հոգիտ, Կաղնի՛, երբ կուրծք կուտար մըրըրիկին՝
Ես շուքին տակ, հանգիստ, լուռ

Կը մեծանայի ։-Հարկ է հիմա ա՛լ հանգչիս
Եվ ես քեզի հաջորդեմ...
Խոնջե՛նք, խոնջե՛նք. կուզեմ կըռվիլ, աշխատիլ,
Ելլել կյանքին, կյանքին դեմ...

Հայր իմ, օրհնե՛. դողդոջ ձեռքերդ գըլխուս դիր.
Թող մատերդ կաթի վայր
Աղոթքդ՝ եկած հոգվյուդ պայծառ խորանեն։
Վերջին ժամն է. օրհնե՛, հայր։
Հաշիշ

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Սիրտը լեցուն է բանտին խավարով.
Ա՛լ դաշտ ու երկինք չը կան իր համար.
Պիտ՝ գըներ աչքի հազար գոհարով՝
Աստըղ մ՝ան նույն իսկ՝ ասուպ ալ ըլլար։

-«Օ՛ն, հաշիշ բերեք, կը մըրմընջե ան,
Երբ աշխարհս ինձմե այսպես կ՝ապշոպեն,
Ես կ՝ուզեմ հոգվույս մեջ ըստեղծել զայն։-
Օրորվիլ, բուժի՛լ հըզոր ցընորքեն։

Օ՛ն, հաշիշ բերեք»։ - Եվ ան կը ծըխե,
Իբր ուրախութեան ըստի՛նքը ծրծեր.
Կը հոսի երազ ջըլերուն մեջե.
Աշխարհը լուծված կ՝ելլա սիրտն ի վեր։

Աչքերը բանտին դիմաց կը գոցվին՝
Ապարանք մ՝իր մեջ գըտնելու համար.
Բիբերն հըրաժեշտ կու տան խավարին՝
Աստղեր բերելու խոստումով ճարտար։

Եվ կը քընանա՛ արվեստի քընով՝
Ինչպես խըղճի խայթն՝ աղոթքե մը վերջ.
Ո՛վ թըշվառ հոգի, հիմա ապահով,
Ազատ է և տեր՝ ցընորքներուն մեջ.

Եվ կ'երազե շա՛տ, շատ բաներ աղվոր
Կամ հուրիներն ալ աղվոր կ'երազե.-
Բըռնած շըղթայի մ'օղակն ահավոր՝
Կընոջ մը մանյակը զայն կը կարծե։

Վարդե, ոսկիե գետի մ'ափն ի վար
Իր մանկան խաղին կը ժըպտի հիմա.
Կամ ինքն իսկ մանուկ՝ լըճակին մեջ հար
Երկինքն՝ երկընքին մեջ զինք կը տեսնա։

Շըրթունքները լուռ, մեղմիկ կը դողան՝
Անշուշտ ուրիշներ գըտնալնուն համար.
Թերևս (ո՞վ գիտե) կը լըրացնե ան
Համբույր մ'ատենով թողված կիսկատար։

Կամ կը շըրջի արտն՝ ազատ քայլերով.
Կը վայլե երկինքն, աստղերու արգանդ։
Մի՛ արթընցընեք, քանզի ապահով
Զինք կը փոխադրեք լույս աշխարհեն՝ բանտ։

Թողեք քընանա.- թող հաշիշին մեջ
Սև շըղթան բեկտի՝ վիշտը լուծելով։
... Ո՛վ անմահ մեկոն, երազի առէջ,
Դու ցընորքն հյուսե ոսկեղեն թելով.

Հյուսե խընդություն մը անընջական
Իր խոցված հոգվույն, ուղեղին վըրա.
Ժըպիտն աղվո՛ր է, եթե նույն իսկ ան
Խաբված ջըղերու վիժա՛ծն ալ ըլլա։
Բանուորուհին

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Պատուհանիս տակէն, ամէն առաւօտ,
Ուրուականի պէս կ'անցնիս.
Եւ կուսագեղ գըլուխիդ վրայ կ'արտասուէ
Տերևաթափ վարդենիս։

Լուռ թաղին մեջ կը լըսեմ քայլդ, ու զարթնող
Շունն՝ որ վըրադ կը հաչէ՛.
Կամ կը լըսեմ քունիս մէջէն ձայնն հազիդ՝
Որ ծոցդ աղուոր՝ կը տանջէ։

Եւ կը խորհիմ՝ թէ քընատ ես և նօթի.
Իրանդ հովէն կը դողայ.
Եւ կը նըստի գանգուրներուդ վըրայ, քո'յր,
Եղեամն իբրև շափիւղայ։

Կամ մուճակներդ են պատըռտած, փողոցին
Ջուրն անոնց մեջ կը ճողփայ.
Կամ ետևէդ շըւայտօրէն կը սուլէ
Թուրք սըրիկայ մ՛անոպայ։

Եւ կը խորհիմ՝ թէ, տան մեջ, մայրդ է հիւանդ.
Ցամքած է ձէթն ալ ճրագին.
Ու դուն կ'երթաս գործատան մէջ աշխատիլ
Լոյսին համար ու կեանքին։

Ես կը խորհի՛մ - և խենթի պես կը բաղձամ
Վար իջնել, քո'յր դալկադէմ,
Քո'վդ իջնել, համբուրել ձեռքըդ նիհար,
Եւ հըծծել. — «Քեզ կը սիրեմ։» —

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,
Կը սիրեմ կուրծքըդ քանդուած՝
Որուն մեջ դեռ կը յամառի Սէրդ երգել
Արտոյտի պէս սըրարբած։

Կը սիրեմ՝ քու անօթութիւնդ ու ծարաւդ,
Եւ ոսկորներդ ուժասպառ.
Ես կը սիրեմ՝ կոյս աղիքներըդ ցամքած,
Մազերուդ սուգն՝ ուսէդ վար։

Եւ ես կ'ուզեմ ամփոփել քեզ սըրտի՛ս վրա
Տատրակի պէս տարագիր,
Տալ ուժըս քեզ, մըրցանակներըս փառքի,
Եվ ազգանունս անբասիր.

Կուրծքըս վահան ընել կուրծքիդ նըշաւակ,
Եվ քօղն ըլլալ պատիւիդ,
Կրանիտէ բազուկիս տակ պաշտպանել
Սեռըդ ու գեղըդ անժըպիտ։

Կ'ուզեմ քեզ տալ ինչ որ պայքարն ինձ տըւավ,
Ինչ որ խլեցի մարտերով.
Քեզ պըսակել արիւնիս գոյնն ունեցող
Յաղթանակիս վարդերով։

Միայն թէ դուն չըլլաս տըժգույն ու քաղցած,
Արևուն տակ չըհազաս.
Մօրըդ վերև չըմարի ճրագն, ու, ո'վ քոյր,
Դուն գործատուն ա'լ չերթաս։
Կարմիր հողը

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Գրասեղանիս վրայ, սա
Սկաւառակին մէջ կայ բուռ մ ' հող , բերուած հոն
Հայրենիքի դաշտերէն։
Նուէր է ան . - Զայն ինձ ձօնողը կարծեց
Սիրտն իր տրուած, առանց երբեք գիտնալու
Թէ կու տար իր պապերունն ալ միասին։
Զայն կը դիտեմ . - մերթ ժամեր
Բիբերս անոր վրայ յառած կը մնամ
Լո՛ւռ եւ թախծո՛տ, իբր այդ հողին մէջ յուռթի
Նայուածքս արմատ արձակէր : -
Կը մտածեմ . - Գուցէ իր գոյնը բոսոր
Չէ պարգեւուած բնութեան ներհուն օրէնքէն .
Վէրքերու սպունգ մ ' ըլլալով
Խմած է մաս մը կեանքի, մաս մ ' արեւու .
Եւ իբր տարր անպաշտպան
Կարմիր հող մ ' է եղած, հայ հող մ ' ըլլալուն։
Գուցէ իր մէջ կը բաբախեն տակաւին
Դարերը հին-հին փառքին,
Կայծն ամրակուռ սմբակներու որոնց գոռ
Արշաւանքն օր մը ծածկեց

Հայկեան վաշտերն յաղթութեան տաք փոշիով:
Կ'ըսեմ . - Իր մէջ դեռ կ'ապրի
Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,
Կեանքս իմ , քու կեանքդ , ու տուաւ ,
Կարծես ձեռքով գիտակից ,
Նոյն թուխ աչուին նոյն եւ նման հոգիով
Կիրք մ ' Եփրատէն առնուած,
Սիրտ մը կամշոտ , թաքստոց
Ըմբոստանքի ու նաեւ բո՛ւռըն սիրոյ:
Իր մէջ, իր մէջ կը կայծկլտայ հոգի մ ' հին `
Հին դիւցազնի եղած փսոր մը գուցէ `
Կոյսի մ ' աղուոր արցունքով .
Հիւլէ մը կայ Հայկէն , փոշի մ ' Արամէն,
Անանիայէն բիբ մը դէտ `
Դեռ աստղերու ճաճանչներով թաթաղուն.
Ա՛զգ մը կայ հոն, սեղանիս վրայ ազգ մը հին,
Որ այսօր իր վերաշողշող այգուն մէջ,
Հողի բնատուր մարմնոյն տակ ինձ կը խօսի,
Կ՝ոգեզինէ - եւ աստղերու ինչպէս ցանն
Անհունութեան մէջ կապոյտ -
Փոշիներովն իր հրաբորբ
Հոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոգէ :
Ու այն ատեն լարը ջղերուս կը դողայ
Սարսուռով մ ' յորդ , ա՛յն սարսուռով ` որ մտքին
Հերկերուն վրայ աւելի՛
Ըստեղծիչ է քան գարնան հովն արփագաղջ:
Ու կը զգամ անցքն ուղեղէս
Նոր յուշերո՛ւ, հոգիներո՛ւ դեռ կարմիր
Խոր վէրքերովն իրենց, վրէժի՛ շրթունքներ.
Եւ այդ հողն, այդ փոշին, զոր ես կը պահեմ
Այնքա՛ն սիրով՝ որքան հոգիս պիտ՝ չընէր
Եթէ մարմնոյս աճիւններն
Օր մը մահէն վերջ հովերուն մէջ գտնար.
Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ
Մնացած մեր յաղթ պապերէն,
Բժժանքն ու ձօնն այդ կարմիր,
Սիրտս սեղմած մագիլներով անծանօթ,
Երկինքն ի վեր, գըրքի մը վրայ, թանկագին
Ժամու մը մէջ ժպիտներու, սէրերու,
Կամ քերթուածի մը ծնած վեհ վայրկեանին
Ձիս հապըշտապ կը մղէ
Մերթ լալու, մերթ մռնչելու,
Եւ զինելու բռունցքս, հոգիս բռունցքիս մէջ:

Կակաչներ

հեղինակ՝ Դանիել Վարուժան

Քո՛ւյր իմ, ցանքին մեջ կակաչներ կան, քաղե՛.
Ահա սիրող սիրտերու պես կարյունին։
Պիտի իրենց բաժակներեն բյուրեղե
Խըմենք ալիքն արևին։

Անոնք ա՛յնչափ բռնկեր են, որ կարծես
Հըդեհն իրենց կայրե դաշտերը անհուն։
Պիտի իրենց բաժակներեն հրակեզ
Խմենք կայծերն աստղերուն։

Քո՛ւյր իմ, քաղե՛, լորի մը պես ծածկված
Ցորեններուն մեջ՝ որ մեղմիկ կնազին։
Պիտի իրենց բաժակներեն բոսորած
Խմենք արյունն ակոսին։

Անոնք ծռած արտույտներու բույնին վրա
Լալ շողերով ողկույզ ողկույզ կծըփան։
Պիտի իրենց բաժակներեն հակնթյա
Խմենք խոստումը Գարնան։

Քաղե՛, քո՛ւյր իմ, կակաչ չէ՛, բո՛ց քաղե դուն.
Հրդեհն իրենց լեցուր գոգնոցդ կույսի։
Պիտի իրենց բաժակներեն փափկասուն
Խմենք կրակներն Հունիսի։

Ծաղկե՛ր, ծաղկե՛ր են բերնիդ պես քնքշենի,
Կխոսակցին ցորյանին հետ օրորուն։
Պիտի իրենց բաժակներեն ծիրանի
Խմենք գաղտնիքն հասկերուն։

Քաղե՛, քույր իմ, պիտի պսակվինք անոնցմով
Վաղվան զվարթ տոնին համար գյուղակին։
Եվ պիտի այդ բաժակներեն, պարելով,
Խմենք գինին Տարփանքին։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

1884 - 1915

Դանիել Վարուժանը (Դանիել Չպուքքարյան) - արևմտահայ բանաստեղծ - ծնվել է 1884 թվականին, Արևմտյան Հայաստանի Սեբաստիա նահանգի Բրգնիկ գյուղում։ Նա մեծացել է գեղեցիկ բնության մեջ, իրենց գյուղի գետեզերքներին թախծող ուռիների օրորի տակ։ Գիշերները մայրը որդուն պատմել է պանդխտության մեջ գտնվող հորից և նրա երևակայությունը բորբոքել թուրք ենիչերիների մասին արած պատմություններով։ Բնությունից ստացած երազային տպավորություններին խառնվել են կյանքի վշտերը։

Վարուժանը գրաճանաչ է դառնում գյուղի վարժարանում, իսկ 1896 թվականից ուսումը շարունակում է Պոլսում սկզբում Սազբղ Աղաջիի Մխիթարյան դպրոցում, ապա Քաղկեդոնի վարժարանում...

Դանիել Վարուժան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայր, օրհնե՛
2. Մոխիրներուն առջև
3. Ձոն

ՀԱՅՐ, ՕՐՀՆԵ՛

Հայր իմ., օրհնե՛. ժամը հասավ, պիտ՝երթամ.
Նոր կյա'նք մ՝ինձի կը սպասե։
Պատանությունն ես թողուցի, նոր արյուն
Երակիս մեջ կը վազե։

Հառա՛ջ, հառա՛ջ, գըլուխս ետ չե՛մ դարձըներ.
Երկընքես վա՛ր թող իյնան
Անվիշտ կյանքիս ամեն աստղեր, հոգըս չէ'.
Անցյալս իջնա թող դամբան։

Օհ, ինձի՛ ի՞նչ թե կը փետեմ վարդին թերթ,
Եվ փուշին կյանք կու տամ միշտ,
Թե գըրկաբաց հորձանքին մե՛ջ կը նետվեմ.
Խինդս է՝ ձանձրույթ, սերս է՝ վիշտ։

Ամեն խայտանք ջախջախեցի սըրտիս մեջ.
Չեմ վախնար սև ծրծելե.
Վանք մըտնող կույս մ՝եմ՝ որ խըզված իր վարսեր

Անխիղճ, անհոգ, կը դիտե՛...

Հա՛յր, ես կէ՝րթամ այն ճամբայեն՝ որ ճերմակ
Մազերուդ զիս կը տանի,
Վաստակաբեկ ոսկըրներուդ, ծեր սըրտիդ
Եվ սերերուդ կենդանի....

Բավական է. - աշխատեցար, կըրեցիր,
Ամեն նետի, հարվածի
Վահան եղար ինծի համար. հոգիդ է՝
Որ հոգվույս մեջ կը հածի։

Իմ արյունս է գոյացած քու քըրտինքեդ.
Հոգնությանդ ծիլն եմ տըխուր։
Հոգիդ, կաղնի~, երբ կուրծք կու տար մըրըրկին՝
Ես շուքին տակ, հանգիստ, լուռ

Կը մեծնայի։ — Հարկ է հիմա ա՛լ հանգչես
Եվ ես քեզի հաջորդեմ...
Խոնջե~նք, խոնջե~նք, կո՝ուզեմ կըռվիլ, աշխատիլ,
Ելլել կյանքին, կյանքին դեմ...

Հայր իմ, օրհնե'. դողդոջ ձեռքերդ գըլխուս դիր.
Թող մատերեդ կաթի վար
Աղոթքդ՝ եկած հոգվույդ պայծառ խորանեն։
Վերջին ժամն է. օրհնե՛, հայր։
ՄՈՒԽԻՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՎ

Հյուղն այրեցավ։ Թըխաթույր ծո՛ւխը նյութին
Կապույտ զենիթը սևցուց.
Ան, դեպ երկինք, խեղճ մարդերու հույսերուն
Ոչընչացումն էր գրծուած։

Հովն՝ որ առաջ կը հեծկըլտար ցըրտագին
Գույքերուն մեջ դիմակաց,
Հիմակ անոնց թույլ մոխրին հետ կը խաղա՝
Հեգնող շըշուկ մը ձրգած...

Կը մորմոքի ընտանիքն իր ջանքերուն
Սին փոշիին հանդիման.
Կու լա՛. անգո՛ւթ այդ հըրդեհումն արցունքո՛վ
Պիտ ջանար մարել ան...

Մայրն ըստինքին վըրա սեղմած մերկ որդին՝

Ավերին մեջ կը շրջի.
Մանկան համար ողջ շապիկ մ՝ան կ՝որոնե՝
Եվ կամ կըտոր մը քուրջի։

Տարաբա՛խտ մայր, կաթին գունատ փըթթումին
Պատըսպարան չը մընաց.
Հանկարծ ոտքին կը զարնըվի սարսուռով՝
Օրոցքեն փայտ մը, խանձա~ծ։

Ո'հ, դաժա~ն բոց, ատիկա բույն մ՝էր սիրո՝
Որ քանդեցիր դայրույթով.
Հոն, տըժգունած զույգ մը շըրթունք վրայե վրա
Կը ծրծեին սեր, գորով։

Արդ, մոխրին տակ խեղճերուն կյա՛նքն է թաղված
Ա'լ դամբան մ՝է հյուղն իրենց.
Բախտն, որուն աչքն արդեն կապած է Աստված.
Փոշի, կըմախք հոն ձըգեց։

Ըսե, ո'վ Տեր, հիմա դեպ ո՞ւր պիտ՝երթան
Այդ թըշվառնե'րը լալկան.
Դու որ անոնց տընակն առիր, հույսն առիր,
Օ~ն, ըսե, ո՛ւր պիտ՝երթան...

Գեթ անձնըվեր գութ չը տրվիր մարդերուն՝
Որ անոնք հոն կըծկըվին,
Որ մարդկային սըրտերու մեջ՝ գեթ անոնք
Խորշ մը գըտնան ջերմագին։

Ո՞ւր պիտ՝երթան։ Էրիկն արդեն հիվանդոտ,
Սիրտ մ՝ուրկե ողբ լոկ կ՝ելլե.
Կինը, վատուժ, պինդ շըղթայված իր վըզեն
Նիհար, փոքրիկ թևերե։

Ո՞ւր պիտ՝երթան. Գահավեժի մը վերև
Իր կյա՞նքը մին կախելու,
Թե, հուսահատ, մյուսն անպատիվ տան մը մեջ
Մաքուր սերն իր ծախելու։

Ո՞ւր պիտ՝ երթան սև նոճի այդ ծաղիկներ
Ճակատագրեն հողմավար,
Ծուխեն, բոցեն այդ քըշվածները շըլմոր,
Վերքի շիթերն այդ թըշվառ։

...Ե՞րբ, պիտի գա, ո՛վ Տեր, այն օրը վրսեմ.
Եղբայրությունն Մարդկության
Ե՞րբ իր շըղթան պիտի ձըգե, սըրտե սիրտ՝
Մեծ համբույրովն՝ հաղթակա՛ն։

Ե՞րբ հըրկիզյա'լը չըքավոր, հուսաթափ,
Մոխրին վըրա ինչքերուն,
Ցուրտ, վիթխարի Լըքումին տեղ պիտ՝գըտնա
Տիեզերական Օգնությո՛ւն։
ՁՈՆ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք —
Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր,
— Քեզի ընծա՛, հին հայրենիք —
Եղեգնյա գըրչով երգեցի քուրմեր,
Ընդ եղեգան փող լո'ւյս ելաներ։

Եղեգնյա գըրչով երգեցի կարոտ.
— Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ —
Ան տարաշխարհիկ բույսի մ՝էր ծըղոտ...
— Ձեզի ընծա՛, հեգ պանդուխտներ —
Եղեգնյա գըրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո'ղբ ելաներ։

Եղեգնյա գըրչով երգեցի արյուն,
— Ձեզի ընծա՛, սուրի զոհեր —
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կընյուն...
— Ձեզի ընծա՛, կրակի զոհեր —
Եղեգնյա գըրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ։

Եղեգնյա գըրչով որբ տունս երգեցի.
— Քեզի ընծա՛, հայր ալեհեր —
Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
— Քեզի ընծա՛, մայր կարևեր —
Եղեգնյա գըրչով օճախս երգեցի,
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ։

Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի.
— Ձեզի ընծա՜, հայ մարտիկներ —
Գրիչս եղավ անթրոց սըրտերու հնոցի...
— Ձեզի ընծա՜, քաջ մարտիկներ —
Եղեգնյա գըրչով վըրեժ երգեցի.

Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ։